

26.957



ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ



336

Պ-48

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ԻՐՈՍԿՎԱ, 1929

336
7-48

Ա. Ս. Կ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՆԿՎԱ, 1929

Ռուս. քաղաք. Ա. Տ. Մ.



32844-61

Главлит А—41089

Зак. № 1546

Тираж 4000

Книжная ф-ва Центриздата, Москва, Шлюзовый проезд, 6.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները իշխանությունն իրենց ձեռքն առան այն ժամանակ, յերբ համաշխարհային իմպերիալիստական պատերազմը խիստ ավերել էր յերկրի ամբողջ տնտեսությունը: Դա այն ժամանակ էր, յերբ մեր յերկաթուղիները, ֆաբրիկաները, գործարանները, հանքերը համարյա կանգ եյին առել կամ մահամերձի վիճակում եյին: Մենք արգեն վաղուց ե ինչ վազոններ ու պարավոզներ չեյինք շինում: Կոճերը (շալաեր) փտել եյին: Փաբրիկաների կտուրները խորտակվել եյին, պատերը ճեղքվել: Հողը անմշակ մնալուց մեծ մասամբ խամացել էր: Յերկիրը ամայացած էր: Այս բոլորը պետք էր վերանորոգել, կարգի բերել, գործի դնել, ոգտագործել ամենալայն չափերով: Բանվորա-գյուղացիական մասսաների դորեղ ջանքերով ձխացին ֆաբրիկաների ծխնելույզները, գործեցին յերկաթուղիները, հողը ավելի բերք տվեց:

Ներկայումս մենք վնչ միայն վերականգնեցինք խորհրդային յերկրի տնտեսությունը մինչպատերազմական չափերով, վնչ միայն գերազանցեցինք այդ

չափերը: Ժողովրդական տնտեսութեան շինարարութեան ծրագիրը մեր կառավարութիւնը կազմել ե այն հաշիւով, վոր մեր Միութիւնը մոտակա տարիների ընթացքում հասնի և գերազանցի առաջավոր կապիտալիստական յերկրներին: Նկատի յե առնված, վորպեսզի Միութեան յետամնաց ռայոնները, գլխավորապէս ազգային հանրապետութիւնները և շրջանները արագ առաջադիմեն, վորպեսզի նրանց տնտեսութիւնը զգալի չափերով բարձրանա և հասնի կամ գերազանցի մեր յերկրի ալ, ավելի հարուստ մասերի տնտեսութեանը: Արդիւնաբերութեան, տրանսպորտի, էլեքտրիֆիկացիայի, բնակարանային շինարարութեան՝ կառավարութեան ընդունած հնգամյա շինարարութեան ծրագիրը, գյուղատնտեսութեան տեխնիկական ավելի կատարելագործված միջոցներով վարելը, յեռադաշտ սիստեմից բազմադաշտային անցնելը, ցանքսերի ընդհանուր հրապարակի լայնացումը և մասնավորապէս տեխնիկական կուլտուրաների (բամբակի, վուշի և կանեփի) ցանքսերի հրապարակի լայնացումը, հողը մեքենաների միջոցով և կոլեկտիվ յեղանակով մշակելը, — այս բոլորը հսկայական միջոցներ են պահանջում: Այսպէս, որինակ, նախընթաց 1923/24 — 1927/28 հնգամյակի ընթացքում — արդիւնաբերութեան, էլեքտրիֆիկացիայի, տրանսպորտի և գյուղատնտեսութեան շինարարութեան վրա ծախսված ե — 26,5 միլիոն ռուբլի, այս հնգամյակի ընթացքում, համաձայն ընդունված պլանի, Ժողովրդական տնտեսութեան այդ ճյուղերի վրա պետք ե ծախսվի արդեն 64,6 միլիարդ ռուբլի:

Իսկ պետութեան սովորական յեկամուտները չեն բավականացնի, վոր խորհրդային կառավարութեան նիշած հսկայական շինարարութեան պլանն իրագործվի:

Իրա համար ե, վոր կառավարութիւնը փոխ ե վերցնում բնակչութիւնից: Բնակչութիւնից փոխ առած փողերի միջոցով մեր պետութիւնը արագացնում ե արդիւնաբերութեան և գյուղատնտեսութեան շինարարութիւնը, այսինքն իրագործում ե յերկրի ինդուստրիալիզացիան, վորը բարելավում ե աշխատավոր բնակչութեան կյանքը:

ԻՆՁ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ՑԱՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

խորհրդային մեր յերկրում մենք մինչև որս կատարել ենք 20-ից ավելի պետական փոխառութիւններ: Յեղել են և վոչ խոշոր փոխառութիւններ, 10—30 միլ. ռուբ., 1—2 տարի ժամանակով, և խոշոր, ինչպէս որինակ, վերջին՝ ինդուստրիալիզացիայի 3-րդ փոխառութիւնը — 750 միլիոն ռուբ., 10 տարի ժամանակով:

խորհրդային կառավարութեան առաջին փոխառութիւնները բացառապէս ծախսվել են Ժողովրդական տնտեսութեան վերականգնման համար, իսկ այժմյան փոխառութիւնները հետագա շինարարութեան նպատակն են հետապնդում, մինչդեռ նախկին կառավարութիւնների ստացած փողերը ծախսվել են հեղափոխութիւնը ճնշելու, պատերազմ վարելու համար, այսինքն ծախսվել են Ժողովրդական տնտեսութեան քայքայման

համար: Ինչպես տեսնում ենք, խորհրդային փոխառությունների և ցարական ժամանակի փոխառությունների միջև հսկայական տարբերություն կա:

Մեր փոխառությունները ժողովրդական տնտեսության բարգավաճման նպատակն են հետապնդում: Այդ բարգավաճմամբ շահագրգռված են ժողովրդի ամենալայն մասսաները, քանի վոր մեր փոխառությունները աչքի առաջ ունեն մանր գնորդին, աշխատավորին, վորն ոբլիգացիաներ գնելով, իր ուժերի չափով ոգնում ե պետությունը՝ ժողովրդական տնտեսությունը վերականգնելու գործում, և դրանով ել, միաժամանակ, ոգուտով ապահովում ե իր խնայողությունները՝ կամ ընթացիկ ազատ միջոցները: Դրա համար ե, վոր մեր փոխառությունները բաց են թողնվում վնչ մեծարժեք ոբլիգացիաներով և, վոր գլխավորն ե՝ այս ոբլիգացիաների արժեքը գնողը մտցնում ե մաս-մաս, վորոշ ժամանակամիջոցի ընթացքում. այդ հանգամանքը աշխատավոր բնակչության ամենալայն մասսաների համար զգալի կերպով դյուրացնում ե ոբլիգացիաների գնումը: Վճարել մի ոբլիգացիայի գինը, ասենք՝ 10 — 20 ռ. միանգամից, ամեն մի աշխատավոր չի կարող, սակայն նույն ոբլիգացիայի արժեքը մաս-մաս (5 — 10 նվազ) վճարելը — դյուրին ե: Մեր պետական փոխառությունների կատարման այս կարգը մեր փոխառությունների բնորոշ առանձնահատկությունն ե: Այդպիսով, մենք տեսնում ենք, վոր մեր փոխառությունների նպատակները վորոշում են և փոխառությունների բնույթը — նրանք մասսայական են և մատչելի:

ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ՅԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային կառավարությունը կազմել են մեր յերկրի ժողովրդական տնտեսության շինարարության պլանը — հնգամյա պլանը: Այս հինգ տարվա ընթացքում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում մենք հսկայական միջոցներ պիտի ծախսենք, սակայն հիշված ժամանակամիջոցն անցնելուց հետո մեր յերկիրը անճանաչելի կդառնա: Մենք ուժեղ կերպով կբարձրացնենք մեր թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը: Մենք տասնյակ հազարավոր կիլոմետր յերկարություն մեր կաթոլիկներ և խճուղիներ կանցկացնենք: Մենք հազարավոր դպրոցներ և հիվանդանոցներ կկառուցենք: Ազգային փոքրամասնությունների կուլտուրական մակերևույթը մենք կբարձրացնենք մինչև այն աստիճան, ինչ աստիճանի վրա վոր գտնվում ե ԽՍՀ Միության ամբողջ բնակչության միջակ մակերևույթը:

Խորհրդային կառավարությունը ժողովրդական տնտեսության վերակառուցման և նոր շինարարության այսպիսի արագ թափ (տեմպ) ե սահմանել նրա համար, վորպեսզի հնարավոր յեղածի չափ շուտ ազատի մեր յերկիրը այն դարավոր յետաձնացությունից, վորի շնորհիվ տգիտության և աղքատության մեջ նա խորխափել ե ցարական ռեժիմի ժամանակ:

Հնգամյա պլանի մասին խոսելիս չպետք ե մոռանալ մի խիստ կարևոր հանգամանք: Յերբ 1914 —

1918 թ. խմբերիայիստական պատերազմը դադարեց, շատ յերկրներ, որինակ, Գերմանիան, Ավստրիան, Վենգրիան և այլն ստատիկ քայքայված ու ամայացած ելին շնորհիվ պատերազմի: Շատ տարիներ չանցած՝ այդ յերկրները արտաքուստ բուժեցին պատերազմից ստացած իրենց վերքերը: Սակայն նրանք իրենց վերքերը բուժեցին միջազգային բուրժուազիայի ոգնությամբ: Հարուստ, պատերազմի միջոցին հագեցած ու տուգած Ամերիկան միջոցներ չեր խնայում պատերազմից քայքայված յերկրները վերականգնելու, բուրժուազիայի իշխանությունը ամրացնելու համար:

Մենք կարող ենք արդյոք ոտարերկրյա պետություններից ոգնություն հուսալ, կարող ենք հուսալ, վոր նրանք կոգնեն մեզ մեր սոցիալիստական տընտեսությունը կառուցել: Իհարկե վոչ: Միջազգային բուրժուազիան վոչ միայն չի կամենում մեզ ոգնել, այլ ընդհակառակը, ամեն կերպ ճգնում է խանգարել խաղաղ շինարարությունը: Դրա համար ել հըսկայական շինարարության իրագործման ձեռք զարկելով, մենք պետք է մեր հույսը դնենք միայն մեր ուժերի և միայն մեր միջոցների վրա:

Մեծ աշխատանքների պլանը ֆինանսավորելու համար անհրաժեշտ փողերը մենք պետք է հենց մեր յերկրում գտնենք: Կգտնենք արդյոք: Այս հարցին պետք է դրական պատասխան տալ — կգտնենք:

Մեր աճող արդյունաբերությունը, յերկրի արտադրողական ուժերի ընդհանուր աճումը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և այլն նոր շինարար-

րության համար միջոցներ են կուտակում ու հատկացնում: Սակայն ժողովրդական տնտեսության մեջ կատարվող կուտակումների հետ մեկտեղ կուտակումներ են լինում նաև բնակչության լայն մասսաների մեջ, վոր նույնպես պետք է ամբողջությամբ գործադրվեն շինարարությունը ֆինանսավորելու համար: Պետական փոխառությունների և խնայողական կասսաների միջոցով հավաքված այս կուտակումները սոցիալիստական շինարարության ֆինանսավորման գործում շատ մեծ դեր կկատարեն: Պետական փոխառություններից գոյացած յեկամուտները հինգ տարվա ընթացքում պետք է կազմեն 6 միլիարդ ռուբլի, այդ թվում 4 միլիարդը ի հաշիվ բնակչության լայն մասսաների խնայողությունների:

Այժմ տեսնենք, թե ինչ կերպ են ծախսվում այն միջոցները, վորոնք Խորհրդային կառավարությունը ստանում է փոխառությունների միջոցով:

ԻՆՁՈՒ ԶԱՄԱՐ ԵՆ ԲԱՅ ԹՈՂՆՎՈՒՄ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ-ԼԻԶԱՑԻԱՅԻ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամեն տարվա սկզբին պետական զանձապահը — ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը պետության տարեկան արդյունքների և ծախքերի պլան է կազմում: Այդ պլանը կոչվում է պետական բյուջե: Մեր տնտեսավարական տարին սկսվում է հոկտեմբերի 1-ից և վերջանում է հետագա տարվա սեպտեմբերի 30-ին: Հետևապես 1929/30 թ. պետական բյուջեն նկատի ունի 1929 թ.

հոկտեմբերի 1-ից մինչև 1930 թ. սեպտեմբերի 30 (բյու-
ջետային տարի):

Այս տարվա ընթացքում պետությունը յենթա-
դրում է 9 միլիարդ 200 միլիոն ռուբլի յեկամուտ
ստանալ: Այդ գումարը պետք է ստացվի այս կերպ.—
այդ գումարի մոտավորապես կեսը՝ յերկաթուղիների,
պոստի, հեռագրի, առևտրի և պետական այլ գույքերի
յեկամուտներից, և մոտավորապես այդքան ել՝ հարկե-
րից: Մնացած 950 միլիոնի չափ գումարը պետու-
թյունը յենթադրում է փոխ առնել իր բնակչու-
թյունից: Թե ի՞նչ դեր է կատարում մեր բյուջեյի մեջ՝
այսինքն պետություն յեկամուտների և ծախքերի
պլանի մեջ՝ փոխառություններից ստացված արդ-
յունը, դա յերևում է ընկ. Ռիկովի՝ դեռ անցյալ
տարի ասած մի ճառից: Ահա թե ի՞նչ ասաց ընկ.
Ռիկովը կոմունիստական կուսակցության XV-րդ
համագումարում.

«Ընթացիկ տարվա (1927/28) յեկամտային բյու-
ջետում խոշոր տեղ են գրավում փոխառությունների
իրացումից ստացված յեկամուտները, վոր մոտավո-
րապես կազմում են 500 միլիոն ռուբլի: Դրա համար
ել անհրաժեշտ է առանձին ուշադրություն դարձնել
փոխառությունների ոպերացիաների զարգացման վրա:
Վոր այդ ուղղությամբ կարելի յե և պետք է շատ
բան անել, ցույց է տալիս ինդուստրիալիզացիայի
II-րդ փոխառության փորձը... Ներկայումս այդ փո-
խառությունը լրիվ կատարված է. ծրագրածից ել դեռ
ավելի չափով: Փոխառության իրացման այսպիսի հա-
ջողությունը ցույց է տալիս, վոր մենք չենք նկա-

տում այն բոլոր հնարավորությունները, վոր կան
մեզանում: Ինդուստրիալիզացիայի փոխառության
իրացման դրական արդյունքները գրավական պիտի
հանդիսանան այդ շրջանում մեր նոր նվաճումների
համար, և փոխառության փորձը պետք է ոգտա-
գործվի՝ այդ ուղղությամբ մեր քաղաքականությունը
շարունակելու համար: Յեթե մենք դա հաջողու-
թյամբ կատարեցինք քաղաքում, հիմք չունենք կաս-
կածելու, վոր պատշաճ նախապատրաստական աշխա-
տանք տանելով, քաղաքը գյուղի հետ կապակցող բոլոր
միջոցներն ու հնարավորությունները ոգտագործելով,
մենք կարող ենք հաջողությամբ իրականացնել այդ-
պիսի փոխառությունը նաև գյուղում»:

Ինչի՞ վրա պետք է ծախսվեն այս տարի փոխա-
ռությունների միջոցով հավաքված փողերը: Այդ
միջոցները կծախսվեն նոր ֆաբրիկների, յերկաթու-
ղիների շինարարության և դրանց ավարտման վրա:
Այդ միջոցները կծախսվեն նոր, մեր յերկրում չտեսն-
ված գորեղ ելեքտրակայանների շինարարության վրա,
վորոնք նույնպես կծառայեն գյուղական և քաղաքա-
յին տնտեսության զարգացման գործին: Այդ միջոց-
ները կծախսվեն յերաշտի դեմ պայքար մղելու,
ազնվացրած սերմեր գնելու, գյուղատնտեսության
մեջ հանքային պարարտացում մուծելու համար և
այլն և այլն: Մենք տեսնում ենք վոր գյուղատնտե-
սության ինդուստրիալիզացիայի բնագավառում մեր
անելիքները հսկայական են:

Այդպիսով, պետական բյուջեյի միջոցով Ժողովրդ-
րական տնտեսության ամրացման և բարգավաճման

համար գործադրվող պետական միջոցները ուժեղացնելու նպատակով բաց է թողնվում ինդուստրիալիզացիայի 3-րդ պետական ներքին խաղարկութայն փոխառությունը, վորի որլիգացիաները նպատակ է դրված տարածելու գլխավորապես մեր յերկրի աշխատավոր բնակչութայն շրջանում:

Քաղաքի բանվորները համեմատաբար արդեն վաղուց իրենց փողով մասնակցում են մեր փոխառությունների մեջ: Քաղաքի ամեն մի աշխատավոր իր պարտքն է համարում ամեն տարի փոխ տալ բանվորագյուղացիական կառավարութայնը՝ իր մի ամսական աշխատավարձի չափով: Իսկ գյուղի բնակչությունը մինչև որս յետ է մնում:

Խորհրդային Միութայն գյուղական բնակչությունը ներկայումս բավական ազատ դրամական միջոցներ ունի, այդ միջոցները նա կարող է վերածել փոխառութայն որլիգացիաների, այն փոխառութայն, վորի նպատակն է՝ լավ հիմքերի վրա դնել և զարգացնել ժողովրդական տնտեսությունը:

Մինչև այժմ կառավարությունը քաղաքային բնակչութայն համար առանձին փոխառություններ երբաց թողնում, իսկ գյուղական բնակչութայն համար — առանձին: Ընդամենը ԽՍՀ Միութայն մեջ բաց է թողնված 6 գյուղացիական փոխառություն: Այս 6 փոխառություններից առաջին չորսն արդեն վճարված են, մնում է միայն III-րդ գյուղացիական փոխառությունը և գյուղացիական տնտեսության ամբողջման փոխառությունը:

Այս գյուղացիական փոխառությունների վերաբերմամբ, կառավարությունը հատուկ արտոնություններ է տվել: Այսպես որինակ, որլիգացիայի տերը գյուղացին իրավունք ունի որլիգացիաներով վճարել գյուղատնտեսական հարկը, որլիգացիաներով կատարել պարտադիր ապահովագրական մոծանքներ: Առանձնապես կարևոր են գյուղացիների համար այն արտոնությունները, վոր տալիս է գյուղացիական տնտեսութայն ամբողջման փոխառությունը: Այս փոխառութայն որլիգացիան ունեցողը հնարավորություն ունի իրեն տարած գումարը կամ դրամով ստանալ և կամ գյուղատնտեսական մեքենաներով:

Վորպեսզի գյուղացիությունը կարողանա անմիջապես համոզվել, թե ինչքան շահավետ բան է փոխառութայն որլիգացիաներ ունենալը, գյուղացիական տնտեսութայն ամբողջման փոխառութայն տիրաժները կատարվել են տեղերում, իրեն՝ գյուղացիության անմիջական մասնակցությամբ: Խաղարկությունները տեղի յեն ունեցել զանազան (60) վայրերում, վորոնց շրջանում խաղարկութայն մեջ դրվել են գյուղացիական տնտեսութայն ամբողջման փոխառութայն 60 սերիաներ:

Ներկայումս կառավարությունը գյուղացիութայն համար հատուկ փոխառություններ չի բաց թողնում: Ինդուստրիալիզացիայի II-րդ փոխառութայն բացթողման և իրացման ժամանակ գյուղացիությունը ցանկություն ցույց տվեց իր խնայողությունները տեղավորել Միութայն բոլոր աշխատավորների համար բաց թողնվող փոխառություններին մեջ:

Քաղաքներում պետութխառությունները տարածվում են առավելապես բանվորների և ծառայողների շրջանում: Քանի վոր քաղաքի աշխատավորները իրենց տրամադրության տակ պատրաստի դրամական խնայողություններ չեն ունենում, փոխառությունն նրանց տրվում է տարկետումով (վորոշ ժամանակամիջոցով, մաս-մաս վճարելու համար) — մոտավորապես 10 ամսով: Աշխատավորների շրջանում փոխառության տարածման այս կարգը նրանց հնարավորություն է տալիս յետ դնելու վոչ միայն կանխիկ դրամական խնայողությունները, այլև, վոր ավելի կարևոր է, սովորեցնում է յուրաքանչյուր աշխատավորին՝ կանոնավոր կերպով յետ դնել խնայողության վորոշ գումար իր ապագա աշխատավարձից:

Պետութխառությունները քաղաքում առանձնապես լայն տարածում ստացան ինդուստրիալիզացիայի I-ին և II-րդ փոխառությունները բացթողնելուց հետո: Ներկայումս քաղաքի մոտ ութ միլիոն աշխատավորներ այդ փոխառությունների ոբլիգացիաներ ունեցողներ են հանդիսանում, իսկ գյուղում գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության և ինդուստրիալիզացիայի II-րդ փոխառության ոբլիգացիաներ ունեցողների թիվը հասնում է մոտ 10 միլիոնի:

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Դեռ ինդուստրիալիզացիայի II-րդ փոխառության իրացման ժամանակ բոլոր ձեռնարկություններում,

հիմնարկություններում, բոլոր գյուղերում պետութխառությունների աշակցության հանձնաժողովներ էյին կազմակերպված: Իբրև հասարակական կազմակերպություններ՝ այդ հանձնաժողովները հանձն էյին առել իրենց աշխատավորների կոլլեկտիվների սպասարկումը, և իրոք ինդուստրիալիզացիայի II-րդ փոխառության իրացման ժամանակ այդ հանձնաժողովները մեծ ծառայություն մատուցեցին՝ քաղաքի աշխատավորներին և գյուղացիությանը փոխառությանը բաժանորդագրելու գործում:

Այս հանգամանքը առիթ տվեց կառավարությանը պետութխառությունների և խնայողության գործի աշակցության մշտական հանձնաժողովներին մասին հատուկ վորոշում հրատարակելու: Այսպիսի հանձնաժողովներ այժմ կազմակերպված են ամեն մի ձեռնարկության, ամեն մի հիմնարկության մեջ, ամեն մի գյուղում: Պետութխառությունների և խնայողության գործի աշակցության հանձնաժողովների պարտականությունն է՝ դեկավարել տվյալ ձեռնարկության, հիմնարկության կոլլեկտիվի և կամ տվյալ գյուղի գյուղացիների մեջ կատարվող փոխառության բաժանորդագրման գործը. նրանք բացատրական աշխատանք են տանում, պետութխառության և խնայողության գործի ազիտացիան ու պրոպագանդն են վարում, տեղեկանքներ են տալիս բոլոր պետութխառության և խնայողության գործին վերաբերող հարցերի մասին, բաժանորդներից հանձնարարություններ վերցնում՝ բանկում կամ խնայողական կասսաներում ոպերացիաներ կատարելու, որինակ ոբլիգացիայի

տիրոջ տարած գումարի ստացումը, կարոնով փող ստանալը և այլն:

Բացի ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատող՝ պետփոխառության և խնայողության գործի աշակցության հանձնաժողովներից, բոլոր խորհուրդներին և գործկոմներին կից (նույնիսկ ԽՍՀ Միության ԿԳԿ-ին կից) կազմակերպված են հանձնաժողովներ:

Աշակցության յուրաքանչյուր վերադաս հանձնաժողովը ղեկավարում է տվյալ տերիտորիայի վրա գտնվող բոլոր ստորադաս հանձնաժողովների գործնեյությունը: Այսպես, որինակ, ռայոնական գործկոմին կից աշակցության հանձնաժողովը ղեկավարում է տվյալ ռայոնում գտնված գյուղախորհրդին յենթակա բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկություններում աշխատող աշակցության հանձնաժողովների գործնեյությունը, շրջանային գործկոմին կից աշակցության հանձնաժողովը ղեկավարում է բոլոր ռայոնական աշակցության հանձնաժողովների գործնեյությունը և այլն:

Գյուղում փոխառության տարածման աշխատանքի ղեկավար կենտրոններ են հանդիսանում գյուղխորհրդին կից աշակցության հանձնաժողովները:

Անհրաժեշտ է հիշել, վոր փոխառություններից ստացված միջոցները պետությունը գործադրում է ժողովրդական տնտեսության հիմնական շինարարության համար, և վոր այդ նպատակը պահանջում է, վոր այդ միջոցները տեղավորված լինեն յերկար ժամանակով՝ 5 — 10 տարով: Այդ պատճառով ել փոխա-

ռությունները բաց են թողնվում այդ ժամանակամիջոցով: Յեթե պետփոխառությունների որլիգացիաների պահողը ծախում է այդ որլիգացիաները ժամանակից առաջ, նա հենց դրանով զրկում է պետությանը այն միջոցներից, վորը նա ստանում էր փոխառությունից և, այդպիսով, որլիգացիաները վաճառողը դժվարացնում է ժողովրդական տնտեսության շինարարության հաջող ընթացքը: Այդ պատճառով ել պետփոխառության որլիգացիաների տերն իր որլիգացիաների վաճառմանը կարող է դիմել ծայրահեղ կարիքի դեպքում, յերբ իրոք վոր առանց վաճառելու և կամ առանց գրավ դնելու և փոխառվություն ստանալու՝ անհնար է յուրա գնալ:

ԽՆՁՈՒ՞ ՈՐԼԵԳՑԻԱՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՊԱՇԵԼ ԲԱՆԿՈՒՍ ԿԱՍ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՍՍԱՅՈՒՍ

Փորձը ցույց է տալիս, վոր շատ հաճախ որլիգացիաների պահողները կորցնում են որլիգացիաները, կամ դրանք վոչնչանում են և կամ գողացվում: Ապահովության համար, սահմանված է այդ որլիգացիաները բանկերում կամ խնայողական կասսաներում պահ տալու կարգը: Այսպես կոչված պահպանափոխտվական ոպերացիան կազմում է հետևյալ յերկու ոպերացիաների միացումն, այն է՝ պահ վերցնել և խաղարկությունների միջոցին հետևել որլիգացիաների համարներին ու տերերին իրազեկ պահել, ինչպես նաև՝ պահ ընդունած որլիգացիաների դիմաց դրամական

փոխառութիւնն տալ: Բայց այդ մասին ավելի ման-
րամասն կ'ըսենք քիչ հետո:

Ինդուստրիալիզացիայի III-րդ փոխառութեան կա-
ռուցումը ամեն հիմք եւ տալիս յենթադրելու, վոր
վոչ միայն քաղաքային, այլեւ գյուղական կյանքի
բոլոր առանձնահատկութիւնները հաշիւ յեն առնված:
Ֆինոթղիւմը փոխառութեան պրոեկտը հիմնավորապէս
մշակել եւ Փոխառութեան հարցը քննել եւ գյուղացի
առաջադիւանների եւ գյուղիթիթակիցների հատուկ
խորհրդակցութեան մեջ: Բացի դրանից, բանվորներն
ու գյուղացիք նույնպէս քննել են փոխառութեան
կառուցվածքը:

Նոր փոխառութեան հարցի այսպիսի հիմնական
հասարակական մշակումը հավաստիացնում եւ մեզ,
վոր այս փոխառութեան կառուցումը համապատաս-
խանում եւ ժողովրդական տնտեսութեան հետագա
ամրացման եւ բարգաւաճման անհրաժեշտութիւնը
զգացող աշխատավոր բնակչութեան լայն մասսաների
շահներին:

Նոր փոխառութիւնը, ունենալով տնտեսութեան
ամրացման եւ բարգաւաճման հատուկ նպատակներ,
ունի մի շարք առանձնահատկութիւններ, վորոնցով եւ
տարբերվում եւ նախկին մասսայական փոխառու-
թիւններից:

Առաջին առանձնահատկութիւնը կայանում եւ
նրանում, վոր ինդուստրիալիզացիայի III-րդ փոխառու-
թեան օբլիգացիայի արժեքը հասցրած եւ այնպիսի
գումարի, վորը հնարավորութիւն եւ տալիս փոխառու-
թեան օբլիգացիան ձեռք բերել նույնիսկ սակավագոր

գյուղացիական տնտեսութիւններին, եւ չենք ասում
բանվորներին ու ծառայողներին:

Նոր փոխառութեան մյուս առանձնահատկութիւնն
այն եւ, վոր ամեն մի ռաշոնում իրացված գումարի
տաս տոկոսը հատկացվում եւ տեղական բյուջէին՝
տեղական բնակչութեան տնտեսական եւ կուլտուրական
կարիքների բավարարման համար:

Ինդուստրիալիզացիայի III-րդ փոխառութեան յեր-
րորդ՝ արտաքու կարգի ելական՝ առանձնահատկութիւնն
այն եւ, վոր ըստ այս փոխառութեան սահմանված են
շահող տոմսերի մեծ քանակութիւն՝ ի հաշիւ նրա, վոր
խաղարկութեան մեջ չեն գրվելու խոշոր գումարներ,
ինչպէս տեղի ունեւ անցյալում:

Վերջապէս նոր փոխառութեան մի առանձնահատ-
կութիւնն եւ այն եւ, վոր ինդուստրիալիզացիայի
III-րդ փոխառութիւնը բաց եւ թողնված թե քաղաքի
եւ թե գյուղի համար, այսինքն այս փոխառութիւնը
հանդիսանում եւ միասնական բանվոր-գյուղացիական
փոխառութիւն:

Ինդուստրիալիզացիայի III-րդ փոխառութեան օգնու-
թեամբ եւ բանվորը եւ գյուղացին ձեռք-ձեռքի տված
կկառուցեն սոցիալիստական տնտեսութիւնը, կամ-
բացեն ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական
շինարարութիւնը:

Այսպէս ուրեմն, ինդուստրիալիզացիայի փոխառու-
թիւնների օբլիգացիաները բանվորի եւ գյուղացու
ձեռքում նշանակում են, վոր նրանք մասնակցում են
մեր ժողովրդական տնտեսութեան շինարարութեան,
մեր յերկրում սոցիալիզմի կառուցման գործին:

Չպետք է մոռանալ նաև այն, վոր բանվորը կամ գյուղացին, փոխառության որլիգացիան գնելով, վոչ մի գոհաբերություն չի անում: Փոխառությունը հարկ չէ: Փոխառության մեջ դրած փողերը չեն կորչում: Վորպեսզի այս ցույց տանք և ապացուցենք, մենք մանրամասն կընենք ինդուստրիալիզացիայի III-րդ փոխառության բացթողման պայմանները:

ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ Ե ԲԱՅ ԹՈՂՆՎԱԾ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՅԻ III-ՐԴ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը արդյունաբերության և գյուղատնտեսության ինդուստրիալիզացիային հատկացված գումարները ավելացնելու նպատակով փորձեցին բաց թողնել նոր պետական ներքին փոխառություն՝ հետևյալ հիմունքներով —

Ինդուստրիալիզացիայի III-րդ փոխառության իրացումից ստացված միջոցները պիտի ծախսվեն ժողովրդական տնտեսության ամրացման համար, այսինքն ժողովրդական տնտեսության ինդուստրիացման վրա: 1929 — 30 թ. պետական բյուջեյում փոխառությունների մասը հավասար պիտի լինի 950 միլ. ռուբ., վորի թվում նոր փոխառությունը — 750 միլ. ռուբլի:

Փոխառության որլիգացիաների միջոցով բանվորն ու գյուղացին ձեռք են բերում խնայողության մի այնպիսի միջոց, վոր ապահովում է իրենց դրամական կուտակումների պահպանությունը, հնարավորություն

է տալիս զգալի գումար տանելու և տոկոսային յեկամուտ ստանալու:

Փոխառությունը բաց է թողնված 750 միլ. ռուբ. (յոթ հարյուր հիսուն միլիոն ռուբլու)՝ յերկու կերպ. մեկը՝ 250 միլ. ռուբ. (յերկու հարյուր հիսուն միլիոն ռուբլու) — տոկոսախաղարկային է. սրա որլիգացիաների արդյունքը մասամբ վճարվում է տոկոսի ձևով, մասամբ խաղարկման ձևով: Փոխառության մյուս տեսակը — հինգ հարյուր միլիոն ռուբլու — անտոկոսախաղարկային է. սրա որլիգացիաների ամբողջ արդյունքը վճարվում է խաղարկության ձևով:

Այսպիսով, փոխառության անտոկոս որլիգացիաներ ունեցողները տոկոսային արդյունքը չեն ստանում, այլ միայն արդյունք են ստանում տանելուց: Տոկոսային որլիգացիաներ պահողները մշտական տոկոսային արդյունք են ստանում և, բացի այդ, շահվում են խաղարկություններից: Պարզ է, վոր անտոկոս որլիգացիաներ գնողները ավելի շատ շահներ ունեն տանելու, քան տոկոսաբեր որլիգացիաներ ունեցողները:

Հիսուն ռուբլի արժեցող որլիգացիա ամեն վոք չի կարող գնել: Դրա համար է, վոր և ամենաանզոր տնտեսություններին որլիգացիաներ գնելու հնարավորություն տալու նպատակով, որլիգացիաների մի մասը բաժանվում է յերկուսի՝ ամեն մեկը 25 ռուբլու արժողությամբ: Բացի դրանից, որլիգացիաների մի մասն էլ բաժանվում է տասը մասի, ամեն մեկը 5 ռուբլի արժողությամբ: Որլիգացիայի յուրաքանչյուր մասը կարելի չէ գնել, ծախել և զբաղ գնել: Իհարկե, որլիգացիայի կեսը տալիս է արդյունքի կեսը, իսկ

որելիզացիայի մի տասերորդ մասը — որելիզացիայի տված (խաղարկության կամ տոկոսային արդյունքի ձևով) արդյունքի մի տասերորդը:

Փոխառությունը բաց է թողնված տաս տարի ժամանակով, 1929 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1939 թ. դեկտեմբերի 1-ը:

Տոկոսա-խաղարկային տեսակի որելիզացիաների տոկոսները բարձրվում են տարեկան 8% չափով: Տոկոսների վճարումը կատարվում է տարեկան մի անգամ՝ անցած տարվա շրջանի համար, ամեն տարվա դեկտեմբերի 1-ի կտրոնով, 1930 թ. դեկտեմբերի 1-ից սկսած:

Փոխառության տոկոսաբեր որելիզացիաների վողջ արդյունքը հավասար է տարեկան 10%, վորոնցից 6% հավասարաչափ բաժանվում են փոխառության բոլոր որելիզացիաներ ունեցողներին միջև: Այդ արդյունքը տրվում է կտրոններով: Մնացած 4% բաժանվում են վոջ հավասարաչափ, այլ նրանց միջև, ովքեր տանում են: Փոխառության տոկոսաբեր որելիզացիաներով պետութունը վճարում է տարեկան 6% ըստ կտրոնների (տալոնների), վոր կպած են որելիզացիաներին: Սանշանակում է, վոր ամեն մի 10 ուրբլիանոց որելիզացիա ունեցողը տարեկան 60 կոպեկ արդյունք է ստանում: Այս արդյունքը կարելի չէ ստանալ տարին մի անգամ, 1930 թ. դեկտեմբերի 1-ից հետո: Յուրաքանչյուր 50 ուրբլիանոց որելիզացիան փոխառության ամբողջ ժամանակաշրջանի համար ունի 10 կտրոն, տարեկան մի կտրոնի հաշվով: Ամեն մի կտրոնից, ժամանակը հասնելուն պես, որելիզացիա պահողը ստանում է 3 ուրբլի: Յերկու կես-որելիզացիաները — նույն է թե

յերկու փոքրիկ որելիզացիաներ են: Այդպիսիներից յուրաքանչյուրը նույնպես 10 կտրոն ունի, ըստ վորում ամեն մի կտրոնն արժե 1 ուրբ. 50 կոպ.: Կտրոնի փողը կարելի չէ ստանալ ֆինբաժնի կամ բանկի կասսայում, խնայողական կասսայում, պոստում, կոոպերատիվում և այլն:

Նիշած տասնամյա ժամանակամիջոցում փոխառության յուրաքանչյուր տեսակի համար տեղի չէ ունենում խաղարկության 38 տիրաժ, ամեն տարի 4 տիրաժ, բացի վերջին տարուց, վոր յերկու տիրաժ է ունենալու:

Փոխառության յուրաքանչյուր տեսակի խաղարկումները հավասար են յերկու հարյուր ուրբլու, հազար ուրբլու և հինգ հազար ուրբլու:

Տոկոսա-խաղարկային փոխառությունն իր շրջանառության բոլոր տաս տարիների ընթացքում 405.800 խաղարկություն կունենա, վորի ընդհանուր գումարը հավասար կլինի 84.512.000 ուրբլու: Փոխառության տոկոսա-խաղարկային տեսակի որելիզացիաներն, ամբողջ տասը տարվա ընթացքում, տանելու հետևյալ շանսն ունեն. — միջին թվով 12 որելիզացիային 1 տանող: Առաջին տիրաժում 405 որելիզացիաներից մեկը տանում է: Անտոկոս-խաղարկային փոխառությունը 10 տարվա ընթացքում 1.861.200 խաղարկություն է ունենալու, վորի ընդհանուր գումարը հավասար կլինի 380.096.000 ուրբլու, այսինքն միջին թվով հինգ որելիզացիաներից մեկը տանում է: Քանի վոր անտոկոս խաղարկայինի վողջ արդյունքը վճարվում է խաղարկման (տանելու) ձևով, ուրեմն և այդ

տեսակի որլիգացիայով տանելու շանսն ել զգալի չափով ավելի շատ ե, քան տոկոսա-խաղարկայինի որլիգացիաներով տանելու շանսը: Առաջին տիրաժում միջին թվով 172 որլիգացիաներից մեկը տանում ե:

Այն որլիգացիան, վորը տանում ե, — շիջեցվում ե, հանվում ե խաղարկության հետագա տիրաժներից: Այդ որլիգացիայի տիրոջը, բացի տարած գումարից, վճարվում ե նաև որլիգացիայի անվանական, այսինքն որլիգացիայի վրա նիշված, արժեքը:

Տոկոսա-խաղարկայինի այն որլիգացիաները, վորոնք խաղարկության տիրաժով հանված են, տոկոսային արդյունք այլևս չեն բերում՝ համապատասխան տիրաժի սկսման օրվանից: Այդպիսի որլիգացիաներ ունեցողներին, բացի տարած գումարից ու որլիգացիայի արժեքից, վճարվում են նաև ըստ ընթացիկ կտրոնի՝ մինչև տիրաժի օրը բարդված տոկոսները: Տարած գումարների վճարումը կատարվում ե խաղարկության պաշտոնական ցուցակի համաձայն, վոր հրատարակվում ե «Известия ЦИК СССР и ВЦИК»-ի մեջ (այտեղից արտատպվում են բոլոր լրագրներում), և կամ այն տեղական լրագրի մեջ, վորի վայրում կատարվել ե տիրաժը, նաև համաձայն այն պաշտոնական ցուցակների, վոր առանձին բրոշյուրներով հրատարակվում ե ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը:

Տարած գումարների վճարումն սկսվում ե տեղերում՝ նիշած լրագրների յերեք հերթական համարները ստանալուց. այսինքն, յերբ տեղում ստացվում ե այն համարը, վորի մեջ տպված են լինում շահած որլիգա-

ցիաների №№-ը, լրագրի այդ համարից հետո յերբ տեղում կստացվեն և 3 հերթական համարները, — այդ ժամանակ միայն կարելի յե վճարել:

Տանող որլիգացիաները վճարելու համար սահմանված ե 10 տարվա ժամկետ, վորն սկսվում ե համապատասխան տիրաժի ավարտման օրից: Սա նշանակում ե, վոր յուրաքանչյուր որլիգացիա ունեցողը մինչև տասը տարի իրավունք ունի իրեն հասանելիք գումարը, իր շահած գումարն ստանալ:

Որլիգացիաների մի մասը շիջեցվում ե այն ժամանակ, յերբ այդ որլիգացիաները գումարներ են տանում: Փոխառության չիջեցված մասը, այսինքն այն որլիգացիաները, վորոնք գումարներ չեն տանում, պետությունը յետ ե գնում 5 տարվա ընթացքում — սկսած 1935 թվից, շիջեցման հինգ տիրաժներով: Շիջեցման տիրաժի ոգնությամբ ե վորոշվում թե իսկապես վոր որլիգացիաներն են յենթակա շիջեցման: Առաջին յերկու տիրաժների ժամանակ շիջեցվում ե փոխառության յուրաքանչյուր տիրաժի 1/8-ից քիչ ավելին, 3-րդ տիրաժի ժամանակ շիջեցվում ե փոխառության յուրաքանչյուր տեսակի 1/4-ը, և վերջապես, վերջին յերկու տիրաժների ժամանակ շիջեցվում ե փոխառության յուրաքանչյուր տեսակի 1/4-ից մի քիչ ավելին: Շիջեցված որլիգացիայի տիրոջը վճարվում ե որլիգացիայի անվանական արժեքը սկսած այն տարվա դեկտեմբերի 1-ից, յերբ տեղի յե ունեցել շիջեցման տիրաժը: Հենց այդ ժամկետից ել դադարեցվում ե տիրաժի յենթարկված տոկոսա-խաղարկային որլիգացիաների տոկոսների բարդումը: Շիջեցման տիրաժի

յենթարկված ոբլիգացիաները վճարման նեկայացնելու համար 10 տարվա ժամանակամիջոց ե նշանակված, հաշվելով շիջեցման տիրաժի ոբլից:

Շիջեցման տիրաժի յենթարկված ոբլիգացիայի տիրոջը վճարվում ե ոբլիգացիայի արժեքը՝ սկսած այն տարվա գետեմբերի 1-ից, յերբ կատարվել ե համապատասխան շիջեցման տիրաժը:

Փոխառության ոբլիգացիաները, նրանցից ստացված արդյունքները, ի թիվս վորոնց ե տարած գումարները, փոխառության ոբլիգացիաներով կատարված գործարքները ազատվում են ամեն տեսակի պետական և քաղական հարկերից ու տուրքերից:

Մեր պետության մեջ խոշոր գումարների սեփականատերերը հաբի յեն յենթարկվում: Հինգ հազար ուուբլի ունեցողից յեկամտային հարկ ե վերցվում: Սակայն յեթե վորեւե մեկը այդ գումարով փոխառության ոբլիգացիաներ գնի, իսկ այդ ոբլիգացիաներով ավելի ես խոշոր գումար տանի, նա վոչ մի հարկի կամ տուրքի չի յենթարկվում, քանի վոր նա իր փողերով ոգնում ե պետությանը՝ ժողովրդական տնտեսությունն ամրացնելու և կառուցելու գործում: Հենց այդ պատճառով ել նույնիսկ խոշոր գումարները, վորոնք գետեղված են ոբլիգացիաներում, հարկադրման չեն յենթարկվում:

Փոխառության ոբլիգացիաները բացի այն, վոր արդյունք են տալիս տոկոսներով ու տարած գումարներով, տալիս են և մի շարք այլ արտոնություններ:

Փողի կարիք յեղած դեպքում ոբլիգացիա ունեցողը հեշտությամբ կարող ե տնորինել իր ոբլիգացիաները: Ոբլիգացիաները կարելի յե ազատորեն ծախել: Կարելի յե գրավ դնել և դրամական փոխառություն ստանալ:

Փոխառության ոբլիգացիաներն իբրեւ գրավ են ընդունվում պետական կապալների և մատակարարումների դեպքում, ընդունվում են իբրեւ վճար՝ աքցիկների և մաքսի: Պետական, ի թիվս վորոնց և կոմունալ գույքերի (հողա-անտառաբաժինների, արդյունաբերական ձեռնարկների և այլն) արենդատորներին իրավունք ե տրվում վարձակալության պայմանների ապահովմամբ մտցնել փոխառության ոբլիգացիաներով:

Փոխառությունների ոբլիգացիաների յուրաքանչյուր պահողի համար կառավարության սահմանած այս պայմաններից միանգամայն պարզ յերեւում ե, վոր բացի այն հսկայական ոգուտից, վոր փոխառությունն ընդհանուր առմամբ տալիս ե ժողովրդական տնտեսությանը, փոխառությունը նույնպես հանդիսանում ե դրամական խնայողությունների առավել ոգտակար պահ տալու ձև:

Ոբլիգացիաները ընդունվում են իբրեւ գրավական պետական կապալների և մատակարարումների, ինչպես նաև՝ իբրեւ արենդների ապահովում և այլն: Ինչպես հայտնի յե, յեթե վորեւե մեկը պետական հիմնարկության կապալ ե վերցնում, նա կապալը ապահովում ե գրավականով, վորը հավասար ե կապալի արժեքի 10 %-ին: Դրամի փոխարեն նա կարող ե ոբլիգացիաներ մտցնել:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԳԻՏԵՆԱ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ՄԱՐԴ
ՊԵՏՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒԼԻԳԱՅԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I. ՊԵՏՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒԼԻԳԱՅԻԱՆԵՐԻ
ԳՆՈՒՄՆ ՈՒ ՎԱՃԱՌՔԸ

Վարկային հիմնարկությունները մեր բոլոր պետական մասնաշաղկապի փոխառությունների որևէ զգացիականորեն զնուծ են որևէ զգացիա ունեցողներից առանց վորեն սահմանափակման: Իսկ բանկում, խնայողական կասսայում կամ մի այլ վարկային հիմնարկության մեջ որևէ զգացիա գնել ամեն անգամ չի հաջողվի: Այսպես, որինակ, I-ին խաղարկային փոխառության և 3-րդ գյուղացիական փոխառության որևէ զգացիաները ամենևին չի կարելի գնել, քանի վոր այդ փոխառության որևէ զգացիաները վարկային հիմնարկությունները չեն ծախսում, իսկ խաղարկության տիրաժների նախորդակին խիստ դժվար է 1926 թվի փոխառության որևէ զգացիաները գնելը:

Որևէ զգացիաների գնումն ու վաճառքը կատարվում են բորսային գներով, այսինքն այն գներով, վոր սահմանում է ֆոնդային բորսան: Բորսան յերկու զին է սահմանում՝ գնողի համար և վաճառողի համար: Բանկը ծախում է որևէ զգացիան վաճառողի գնով, և գնում է գնորդի գնով: Վաճառողի զինը գնորդի գնից բարձր է:

Բորսային գները հրապարակվում են համարյա թե բոլոր կենտրոնական լրագրներում (անպայմանորեն՝ հետևյալ լրագրներում — „Известия ЦИК СССР и ВЦИК“ և „Экономическая жизнь“) և տեղական շատ լրագրներում:

2. ՓՈԽԱՏՈՒ - ԳՐԱՎԱՅԻՆ ՈՊԵՐԱՅԻԱՆԵՐ

Պետական բանկի բոլոր հիմնարկությունները, այլ բանկերը և կենտրոնական խնայողական կասսաները I-ին խաղարկային փոխառության, 1927 թ. 10%-ային խաղարկային փոխառության, ինդուստրիալ զգացիայի I-ին և II-րդ փոխառությունների և գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության որևէ զգացիաները գրավ վերցնելով դրամական փոխառություն են բաց թողնում:

Վերև թված փոխառությունների որևէ զգացիաները գրավ վերցնելիս փոխառությունը հավասար է որևէ զգացիաների անվանական (որևէ զգացիայի վրա նիշված) գնի 60%-ին: Ինդուստրիալ զգացիայի փոխառությունների և գյուղացիական տնտեսության փոխառության որևէ զգացիաների դեմաց տրված փոխառության համար վճարվում է 12%, 1927 թ. 10%-ային խաղարկային փոխառության որևէ զգացիաների դեմաց տրված փոխառության համար վճարվում է 10%, և առաջին խաղարկային փոխառության որևէ զգացիաների դեմաց տրված փոխառության համար — 12%: Բացի այդ, 1927 թ. 10%-ային փոխառության որևէ զգացիաներով փոխառության համար կոմիսիա յե վերցվում ամսական 1/4%, իսկ առաջին խաղարկային փոխառության համար՝ ամսական 1/5%: Փոխառությունը տրվում է մի տարի ժամանակով, իսկ փոխառությունը ոգտվելու համար տոկոսների վճարումը, իբրև կանոն, կատարվում է զրավ դրված որևէ զգացիաների հաշվառելի ժամանակ: Գրավ վերցրած որևէ զգացիաների համար

գրավատուին անդորրագրեր ե տրվում կամ անվանական
և կամ ներկայացնողի համար (անդեմ), անդորրագրի
մեջ հիշատակվում ե փոխառության անունը, որլիգա-
ցիայի գումարի և փոխառության չափը: Անվանա-
կան անդորրագրերը չի կարելի այլ անձանց տալ՝
առանց հատուկ փոխանցման մակագրության և դրանք
կորչելու կամ գողանալու դեպքում կարելի յե վերա-
կանգնել իսկական տիրոջ իրավունքները: Իսկ անդեմ
անդորրագրերը կարելի յե առանց վորևե ձևականու-
թյունների հանձնել այլ անձանց. կորչելու դեպքում
այդպիսի անդորրագրերը չեն կարող վերականգնվել:
Սրա հետ միասին հենց անդորրագրում և կամ առան-
ձին ցուցակում գրվում են գրավ դրած որլիգացիաների
համարները: Ցուցակը կազմում ե կամ՝ ինքը գրավա-
տուն և կամ՝ գրավատուի հանձնարարությամբ՝ բանկը:
Պետփոխառությունների գրավ դրվող որլիգացիա-
ները պիտի ունենան ընթացիկ կտրոն և հետագա
ժամկետերի բոլոր կտրոններ:
Գրավ դրված որլիգացիաների կտրոնների յեկա-
մուտը պատկանում ե գրավատուին, այսինքն որլի-
գացիայի սեփականատիրոջը: Այն կտրոնները, վորոնց
%% վճարման ժամանակն արդեն հասել ե, անմիջա-
պես տրվում են որլիգացիայի տիրոջը՝ սրա պահանջով.
յեթե մի փոխառության որլիգացիաների գումարը
200 ռ. ավել չե, կտրոնների կտրումը բանկը կատա-
րում ե անվարձ. իսկ յեթե 200 ռուբլուց ավելի
որլիգացիաներ են գրավ դրված, վարկային հիմնար-
կությունը կտրոնները կտրելու համար ամեն մի
1000 ռուբլուն ստանում ե 20 կոպ.

3. ՈՐԼԻԳԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՀՈՒՐԸ

Վորպեսզի պետական փոխառությունների որլի-
գացիաների պահողներին հնարավորություն տրվի
ապահովել որլիգացիաների անվթար պահպանությունը
դժբախտ դեպքերից, որինակ, հրդեհից, գողությունից
և այլն, բանկերն ու խնայողական կասսաները ընդու-
նում են որլիգացիաները պահելու:

Որլիգացիայի տերերի համար այս ոպերացիան
այն հարմարությունն ե տալիս, վոր որլիգացիաները
ի պահ ընդունելով, բանկը կամ խնայողական կաս-
սան պատասխանատվություն ե վերցնում՝ որլիգա-
ցիաները անվթար պահելու: Յեթե բանկին կամ
խնայողական կասսային ի պահ տրված որլիգացիաները
այրվեն կամ կորչեն, որլիգացիայի տերը վոչինչ չի
կորցնի, քանի վոր կորած որլիգացիայի արժեքը ամ-
բողջապես վերագարծվում ե նրան: Սրանումն ե
կայանում այս ոպերացիայի հարմարությունը:

Պահ տալ կարելի յե յերկու ձևով. մի ձևն այն
ե, վոր բանկը կամ խնայողական կասսան որլիգացիա-
ները միայն պահում են: Որլիգացիայի տերն
ինքը պետք ե հետևի կտրոնների և տիրաժների ժամ-
կետերին, ստանա տարած գումարները և այլն: Պահ
տալու մյուս ձևն այն ե, վոր խնայողական կասսան
կամ բանկը հանձն են առնում նաև հետևել տիրաժ-
ներին, որլիգացիայի տիրոջ փոխարեն ստանում են
նրան հասանելիք տարած գումարները, տոկոսային
արդյունքները ու տիրաժային կապիտալը և այլն:

4. ՈՐԼԻԳԱՑԻԱՆԵՐԸ ՊԱՀ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄԱՑ
ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՈՊԵՐԱՑԻԱՆ

Այդ ոպերացիան վերևում հիշված յերկու ոպերացիաների մի ամբողջացումն է հանդիսանում: Առաջին անգամ այս ոպերացիան կատարվեց, յերբ բանվորները և ծառայողները կոլլեկտիվ կերպով հանձնեցին ինդուստրիալիզացիայի II-րդ փոխառության ոբլիգացիաները ի պահ այն հաշվով, վոր բանվր հոգա և հետևի ոբլիգացիաների վերաբերյալ բոլոր ոպերացիաների կատարմանը:

Ըստ իր ելույթյան նոր ոպերացիա չհանդիսանալով, դա չափազանց հարմար և ոգտավետ է: Այս ոպերացիայով ոգտվող ոբլիգացիայի տերը պահում է իր ոբլիգացիաները վարկային հիմնարկության մեջ անվճար, յեթե նա հանձնել է իր ոբլիգացիաները կոլլեկտիվի միջոցով, կամ ինքնուրույն կերպով է հանձնել, և յեթե ոբլիգացիաների արժեքը 200 ռուբլուց ավել չէ: Պատշաճ վկայագրով, վորն ոբլիգացիայի տերը ստանում է ոբլիգացիաները պահ տալիս, նա կարող է վարկային հիմնարկության մեջ պահվող ոբլիգացիաները գրավ դնելով փոխառություն ստանալ, սակայն պահ տրված ոբլիգացիաների անվանական արժեքի 60%-ից վոչ ավել: Փոխառություն ստացողը փոխառությունը կարող է շրջել միանվագ կամ մաս-մաս վճարելով:

Այդ տեսակի վկայագրերը լինում են անվանական և անդեմ: Սա ամբողջապես կախված է ոբլիգացիայի տիրոջ ցանկությունից: Յեթե ի պահ հաճնված

ոբլիգացիան տանում է և կամ տիրաժից դուրս է դալիս, վարկային հիմնարկությունները հաղորդում են այդ մասին ոբլիգացիայի տիրոջը, նրա տված հասցեյով: Յեթե ոբլիգացիաները ի պահ են հանձնված ներկայացնողի անունով, ծանուցում չի արվում, քանի վոր վկայագրերը տալուս պահ տվողից հասցե չի վերցվում, և պահ տվողն ինքը հայտնի չե վարկային հիմնարկության:

Տարբերությունը նրանումն է վոր անվանական վկայագրերը կորցնելու դեպքում, դա կարելի չե վերականգնել: Իսկ ներկայացնողի անունով ի պահ տված վկայագրերի տիրոջ իրավունքների վերականգնումը կատարվում է միայն դատարանի վորոշմամբ:

5. ԻՆԶՔՍՆ ԾԱԽՍ Ե ՊԱՀԱՆՉՎՈՒՄ ԱՅՌ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԸ
ԿՍԱՐԵԼՈՒ ՀՍՄՐ

Այս կամ այն ոպերացիաները կատարելու համար վարկային հիմնարկությունները ստանում են սահմանված վճար:

Մինչև 200 ռուբ. անվանական արժեք ունեցող ոբլիգացիաները վարկային հիմնարկությունները պահում են և բոլոր այդ ոբլիգացիաներին վերաբերյալ ոպերացիաները կատարում են անվճար: Նույնպես անվճար պահվում են այն ոբլիգացիաները, վորոնք հանձնվում են բանվորների և ծառայողների կոլլեկտիվների միջոցով, անկախ դումարից: Բոլոր այլ դեպքերում վճար է վերցվում հետևյալ չափերով —

Խաղարկային փոխառությունների ոբլիգացիաները պահելու և նրանց վերաբերյալ բոլոր ոպերացիա-

ները կատարելու համար բանկը յուրաքանչյուր 12 ամսվա համար 7 կոպեկ ե վերցնում 100 ռուբլուց (անվանական). վոչ լրիվ հարյուրները համարվում են լրիվ: Այսպիսով յեթե վորևե մեկը հանձնել ե վարկային հիմնարկությանը պահելու համար 228 ռուբ. որլիգացիաներ, նա տարեկան, պահելու համար, վճարում ե 7 կոպեկ: Յեթե հանձնել ե 355 ռուբլու, վճարում ե 14 կոպեկ, և այլն:

Պահ տալու դիմաց ստացված այս վկայագրերով պահ տրված որլիգացիաների ցուցակը կազմելու համար վարկային հիմնարկություններն ու խնայողական կասսաները, խաղարկային փոխառությունների որլիգացիաներից, վոր 1000 ռուբ. անվանական արժողություն ունեն, ստանում են 20 կոպեկ, առնվազը՝ 10 կոպ., մինչև 200 ռ. գումարի որլիգացիաների ցուցակը կազմվում ե անվճար:

Յեթե որլիգացիաները տրվում են սոսկ պահելու, կտրոնները կտրելու համար 100 ռուբլուց վերցնում են 20 կոպ. առնվազը՝ 10 կոպ., 200 ռ. արժողությամբ որլիգացիաների կտրոնները կտրվում են անվճար: Այսպիսի սակագին (տակսա) ե սահմանված նաև գրավ դրված որլիգացիաների համար՝ յեթե այդ որլիգացիաները հանձնված են սոսկ ի պահ:

Փոխառությունների տոկոսային կոպարները (ստավկա) մենք թվեցինք վերևում:

6. ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԸ

Մեր պետական փոխառությունների որլիգացիաներ ունեցողները մեծ մասամբ բանվորներ և ծա-

ռայողներ են: Դրա համար ե, վոր նրանց, իբրև որլիգացիաներ պահողների, ամենօրյա կարիքները բավարարելու համար անհրաժեշտ ե աշխատանքի վայրում կազմակերպել բոլոր տնտեսական ֆոնդային ուղեւորների կատարումը: Դրա համար ամեն մի բանվորական և կամ տեղական կոմիտե ունեցող կոլլեկտիվին առընթեր, խնայողական կասսան և կամ բանկը իր հատուկ ներկայացուցիչն ե նշանակում, վորը և կատարում ե բոլոր տարրական ֆոնդային ուղեւորները, իբրև միջնորդ՝ բանվորների և ծառայողների կոլլեկտիվի ու բանկի կամ խնայողական կասսայի միջև: Բանկի կամ խնայողական կասսայի ներկայացուցիչ պիտի լինի, ինչպես ընդունված ե, սպասարկվող ձեռնարկության կամ հիմնարկության աշխատակիցը, ցանկայի յե՝ գանձապահը, հաշվապահը, վորի հետ բանկը կամ խնայողական կասսան պայման ե կապում: Իր կատարած աշխատանքի համար բանկի կամ խնայողական կասսայի ներկայացուցիչը բանկից կամ խնայողական կասսայից, ամեն անգամ առանձին (զդելնի) վարձատրություն ե ստանում, համաձայն սահմանված սակագնի: Այսպես, որինակ, մի ամբողջ որլիգացիայի տարած գումարը վճարելու համար ներկայացուցիչը բանկից ստանում ե 50 կոպ., որլիգացիան գրավ վերցնելու համար — 5 կոպ., որլիգացիան ծախելու համար — վաճառողների և գնողների գների միջև յեղած տարբերությունը և այլն: Բանվորների և ծառայողների կողմից բանկի ներկայացուցչին հանձնված արժեքավոր թղթերի պատասխանառությունն իր վրա յե վերցնում բանկը կամ խնայողական կասսան:

Բանկի կամ խնայողական կասսայի ներկայացուցչի աշխատանքը ձեռնարկության կամ հիմնարկության մեջ կատարվում է աջակցության հանձնաժողովի անմիջական ղեկավարության ներքո:

Պարզ է, վոր կոլլեկտիվի անդամների կարիքները միջնորդական ոպերացիաների միջոցով կանոնավորելու և բանկի կամ խնայողական կասսայի ներկայացուցչի աշխատանքի վերաբերմամբ հասարակական կոնտրոլն իրագործելու կազմակերպման գործում ահագին դեր ունի և պիտի կատարի պետական վարկի ակտիվիստը:

7. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՅԵՎ ՏԱՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Ժամկետային կտրոնների վճարումը, տարած գումարների վճարումը և շեջեցված ռելիզացիաների տիրաժային կապիտալի հատուցումը կատարում են բանկերը, խնայողական կասսաները, պոստ-հեռագրական հիմնարկությունները և գյուղատնտեսական վարկի համարկությունները: Բոլոր փոխառությունների, բացի 3-րդ գյուղացիական փոխառության և առաջին խաղարկային փոխառության տարած գումարների, մինչև 1000 ո., վճարումը կատարվում է տեղում. 3-րդ գյուղացիական փոխառության և առաջին խաղարկային փոխառության տարած գումարները, մինչև 100 ո., վճարվում են դարձյալ տեղում: 3-րդ գյուղացիական փոխառության և առաջին խաղարկային փոխառության՝ 500 ո. ավելի տարած գումարների, իսկ մնացած փոխառություններով—1000 ո. ավելի տարած

գումարների վճարումը կատարվում է Մոսկվայում, ռելիզացիաների իսկությունը ստուգելուց հետո: Տարած գումարները վճարվում են կանխիկ դրամով, առանց վորևէ բարձումների կամ հետպահումների: Գյուղացիական տնտեսության ամրացման փոխառությամբ տանողը կարող է, յեթե ցանկանա, գյուղատնտեսական մեքենաներ ստանալ:

8. ՈՒԼԻԳԱՑԻԱՆԵՐԻ ԱՐՏԱՏՊՈՒՄԸ

Յեթե ռելիզացիան իր արտաքին տեսքով անպետքացել է (կեղտոտած է կամ դժվար ընթեռնելի յե դարձել և այլն) հետագա շրջանառության համար, սակայն նրավճարման ժամանակը դեռ չի հասել, այդպիսի ռելիզացիան կարելի յե արսատալել:

Ուլիզացիան արտատալության է ընդունվում այն դեպքում, յեթե նրա վրա պահպանվել են վճարման նշումները, այսինքն ֆինժոդկոմի ստորագրությունը, ռելիզացիայի արժեքի, համարի, սերիայի, փոխառության անվան նշումները, նաև կտրոնի վրա նիշած վճարման ժամանակամիջոցը: Արտատալումը կատարվում է Գոսզնակ-ում, և Գոսզնակին պետք է ուղղել բոլոր փչացած (վնասված) ռելիզացիաները: Մի ռելիզացիայի արտատալումն արժե 25 կոպեկ: Ուղարկումը կատարվում է ռելիզացիայի տիրոջ հաշվին: Առանձին կտրոնները չեն արտատալվում: Ուլիզացիաներն արտատալման ընդունելու դիմաց համապատասխան անդորագիր է տրվում:

9. ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ

Պետփոխառություններին վերաբերյալ ամեն մի տեղեկություն կարելի չե ստանալ բանկում, խնայողական կասսայում, ֆինբաժնում, պոստում, գյուղխորհրդում, գյուղատնտեսական վարկային ընկերություն մեջ, ֆարբիկ-գործարանային կոմիտեյում, խրճիթ-ընթերցարաններում: Յեթե վերև հիշված հիմնարկությունները չբավարարեն որլիգացիաներ պահողի վորևե պահանջը կամ հարցումը, նա կարող ե, տեղեկանք կամ խորհուրդ ստանալու համար, դիմել կամ Յերևան, ֆինժողկոմատին, և կամ, ծայրահեղ դեպքում, յեթե դիմողը բավարարություն չի ստանում վոչ մի տեղից, դիմել Մոսկվա ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիտարիատի պետփոխառությունների բաժնին (Москва, Отдел Госзаймов Наркомфина СССР, Ильинка, 9, Наркомфин), վորն ամեն տեսակի տեղեկանքներ ե տալիս անվճար և անմիջապես պատասխանում ե նամակներին: Պատասխանի համար նամակազրոշմ ուղարկել հարկավոր չե:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Պեսական փոխառությունների նշանակությունը յերկրի տնտեսության համար	3
Ի՞նչ տարբերություն կա ցարական փոխառությունների ու խորհրդային փոխառությունների միջեվ . . .	5
Հնգամյա պլանը յեվ փոխառությունները	7
Ինչու համար եմ բաց բողմվում ինդուստրիալիզացիայի փոխառությունները	9
Աջակցության հանձնաժողովներ	14
Ինչու որլիգացիաները պես և պահել բանկում կամ խնայողական կասսայում	17
Ի՞նչ ցայմաններով ե բաց բողմված ինդուստրիալիզացիայի III-րդ փոխառությունը	20
Ի՞նչ պես և զիսենա յուրաքանչյուր մարդ պեսփոխառությունների որլիգացիաների մասին	28

ՊԱՀԱՆՁՅԵՑԵՔ
ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.
ԴԻՄԵԸ՝ Москва, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0197902

5 407.



**А. С. К.
Госзаймы**

На арьянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10.